

Լավություն չ'ն արա, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա:

ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS, 2022, № 1 (53), ԵԱՐԵՂՈՐԿ

Հոգաբարձության խորհրդի որոշմամբ՝ թերթի սույն համարը նվիրվում է հիմնադրամի գործադիր տնօրեն, պրոֆեսոր ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ծննդյան 85-ամյակին: Այն հիմնադրամի գործունեությունն արտացոլող նյութերի հետ միասին ներկայացնում է հանդիսավոր արարողության ժամանակ ընթերցված բոլոր գրավոր ուղերձներն անխտիր և բանավոր կարևոր ելույթները, որոնք բնութագրում են հոբելյարի հայրենանվեր վաստակը:

ՎԱՍՏԱԿԱԾ, ՓԱՌԱՎՈՐ ՀՈՒՐԵԼՅԱՆ



Հուզված հոբելյարը՝ շնորհակալական խոսքի պահին

2021 թ. դեկտեմբերի 14-ին ԵՊՀ 7-րդ մասնաշենքի Եղիշե Չարենցի անվան 220 լսարան - դահլիճում կայացավ ՀՀ վաստակավոր մանկավարժ, արևելագիտության ֆակուլտետի երկարամյա դեկան, բանասիրական գիտությունների թեկնածու, արցախյան ազատագրական շարժման և առաջին պատերազմի շրջանում Արցախի պաշտպանության բանակի

հրամանատարի արտաքին կապերի գծով տեղակալ, գնդապետ, «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն, պրոֆեսոր **ԳՈՒՐԳԵՆ ՎՐԵԺԻ ՄԵԼԻՔՅԱՆԻ** ծննդյան 85-ամյակի շքեղ հանդիսությունը, որը կազմակերպել էին ԵՊՀ ռեկտորատը և արևելագիտության ֆակուլտետը: Օրինակելի համալսարանականի հոբելյանին նվիր-

ված հանդիսավոր միջոցառումը վարում էր նրա երբեմնի սան, արևելագիտության ֆակուլտետի ներկա ղեկան, պատմ. գիտ. դոկտոր Ռուբեն Մելքոնյանը:

Ընդարձակ դահլիճը վաղուց այդքան բազմամարդ չէր եղել. մասնակցում էին համալսարանի նախկին ու ներկա ղեկավարներ, տարբեր ֆակուլտետների գործընկերներ, հյուրեր և ուսանողներ: Հնչեցին շնորհավորանքի ջերմ խոսքեր, ընթերցվեցին բազմաթիվ ուղերձներ, և եղան խոսքի հնարավորություն չստացած «նեղագածներ»:

Հոբելյարի բազում շքանշաններին ու մեդալներին ավելացան ևս երկուսը՝ Արցախում և Հայաստանում խոնարհված եկեղեցիների վերականգնման և այլ բարեգործությունների համար՝ հայ եկեղեցու «Մուրթ Մահակ – Մուրթ Մեսրոպ» բարձրագույն շքանշանը, ԵՊՀ գիտխորհրդի միաձայն որոշմամբ՝ միմիայն բացառիկ ծառայությունների համար շնորհվող ոսկեհուռ «Պատվո շքանշանը»: Հանձնելով ԵՊՀ բարձրագույն պարզևը, որ թվահամարով 2-րդն է, ռեկտորի ժ. պ. պրոֆ. Հովհ. Հովհաննիսյանին իր բնութագրական ելույթում ընդգծեց.

– Պրոֆ. Գուրգեն Մելիքյանը ԵՊՀ մերօրյա լեզենդ է, որի վաստակի մասին վկայում են արված գործերը: «Գուրգեն Մելիքյանի՝ Բաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» և անձամբ Գուրգեն Մելիքյանի ջանքերի շնորհիվ բարեգործական բազմաթիվ աշխատանքներ են իրականացվել Հայաստանում և Արցախում, հազարավոր ուսանողներ ստացել են կրթաթոշակներ, հրատարակվել են հայագիտական բազում կարևոր գրքեր ու իրականացվել այլևայլ հայրենանպաստ գործեր: Մեզ համար մեծ պատիվ է նրա հետ աշխատելը: Ձերմ ու սրտաբուխ ելույթներ ունեցան ԵՊՀ նախկին ռեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ Ա. Միմոնյանը, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Գ. Մանուկյանը, ակադեմիկոսներ Ռ. Սաֆրաստյանը, Ա. Մելքոնյանը, Գ. Գևորգյանը:

Բոլոր ելույթներին հնարավոր չէ անդրադառնալ, սակայն, «Բարեգործի» ընթերցողի երևակայությանը թողնելով միջոցառմանը հնչած շնորհավորանքի բազմաթիվ ջերմ խոսքերի բովանդակությունը, ներկայացնում ենք հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի շնորհավորական ուղերձը.

«Թանկագին Գուրգեն Վրեժի Մելիքյան,

Օրինյալ լինի Ձեր փառավոր ծնունդը: Կորստաբեր մեր օրերի մղձավանջային իրականության մեջ լույսի շողեր առկայծող փարոս եք Դուք: Չար ուժերը մեր ժողովրդին հայրենագրկել ու ցրել են աշխարհի լայնքով ու երկայնքով: Դուք նրա այն զավակն եք, որ, ծնված լինելով օտար երկնքի տակ, եկաք ու ամրացաք հայրենիքում, որովհետև ի սկզբանե գիտեիք անփոխարինելի հայրենիքի գինն ու հայոց պետականության արժեքը:

Վաթառներեք տարի՝ մի ողջ գիտակցական կյանք երևանի պետական համալսարանում եք՝ տարբեր կարգավիճակներով: Այդ ընթացքում, շնորհիվ Ձեր բացառիկ աշխատասիրության ու նվիրվածության, ուսանողից բարձրացաք դասախոսի, բանասիրական գիտությունների թեկնածուի, դոցենտի, ապա և պրոֆեսորի գիտական աստիճանի, խորացաք իրանագիտության մեջ՝ հրատարակելով հայ – պարսկական լեզվական, գրական ու մշակութային առնչությունների մասին Ձեր արժեքավոր ուսումնասիրությունները, հոդվածներն ու գրքերը, երկար տարիներ ղեկանի պաշտոնում ղեկավարեցիք ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը: Ազնիվ բարեվարքությամբ նվաճեցիք բարձրագույն հեղինակություն և դարձաք հային ու մարդուն գնահատելու չափանիշ: Մարդու Ձեր տեսակի մեջ են խտացված մարդկային խիղճն ու աստվածային բարեգոթությունը, ազնվության ու արդարության բարձր գիտակցումը: Հենց դա է Ձեր մեջ գորացրել նեղային կարեկից և հարեհաս լինելու զգացումը, բարեգործության առաքինությունն ու հայրենիքի զինվոր լինելու առաքելությունը:

Պատերազմում պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալի անաղմուկ, բայց արդյունավետ Ձեր գործունեությունը հիշենք, թե՛ մեր երկիրը շենացնելու, բարեկեցիկ, անվտանգ ու հայ մարդուն արժանի հայրենիք դարձնելու ջանքերը:

Միանգամայն բնական է հայրենիքի համար զոհված հերոսին արժանավորապես մեծարելն ու հետմահու գնահատելը, և սակայն խիստ անարդար՝ ապրող հերոսի մասին, թեկուզ պարկեշտորեն, լռելը: Իր երևակայած իդեալական հերոսին Եր. Օտյանն այսպես է բնութագրել. «Չըլլալիք բաներ կպատմվին իր մասին, որ ոչինչ են իր ըրածներուն քով»: Այդպիսին եք Դուք՝ ապրող հերոսների մեջ:

Ձեր բոլոր արժանիքները վկայակոչելու հնարավորություն չունենք, բայց և չենք կարող չբնութագրել Ձեր իսկ անունով ստեղծված հիմնադրամի գործունեության անվրեպ ղեկավարությունը, որի ականատեսն ենք նրա հիմնադրումից՝ 1995 թվականից ի վեր:

Գաղտնիք չէ, որ հիմնադրամի՝ բարեգործական տարբեր նպատակներով ծախսվող դրամական միջոցները գոյանում են Ձեր մարդկային անձնական հմայքի և հեղինակության, ձեռներեցության, տարատեսակ կապերի, անհատական ջանքերի, Ձեր հանդեպ նվիրատուների սիրո և վստահության շնորհիվ: Ավելի պարզ ասենք՝ Ձեզ սիրելով ու վստահելով՝ բարեգործություն են կատարում: Մակայն, ցավոք, այդ միջոցներն անսահման չեն, ուստի դրանք գործածվում են այն խելամիտ հաշվենկատությամբ, որով առաջնորդվում եք Դուք:

Փառահեղ հոբելյանի առիթով ելույթ ունեցողներն իրավունք ունենին և սիրով վկայակոչում էին Ձեր

կատարած աշխատանքներից շատերը: Սակայն հոգաբարձության նույն խորհրդում համագործակից լինելով՝ մենք ամեն պահ ենք տեսնում հայրենամիտ գործչի ու բարերարի Ձեր ճկուն աշխատանքը անընդհատ փոփոխվող իրադրություններում:

Իրավիճակ է փոխվում ամեն օր ու ամեն պահ: Թաքուն ու բացահայտ թշնամիները մեր երկրին ու հայրենակիցներին պատճառում են նորանոր աղետներ, բոլորիս կանգնեցնում նոր արհավիրքների ու մարտահրավերների, հաճախ էլ՝ անլուծելի խնդիրների առաջ:

2020 թ. սեպտեմբերի 26-ին Ձեզ հետ միասին վերադարձանք Իջևանից՝ Տավուշի մարզի բնակիչներին, դպրոցներին ու մշակութային հաստատություններին հիմնադրամի օգնությունը հանձնելուց: Հաջորդ օրն իսկ՝ 27-ին, սկսվեց 44-օրյա ողբերգական պատերազմը, որն ավարտվեց մեզ պարտադրված ցավալի պարտությամբ, ահռելի մարդկային և տարածքային կորուստներով: Արցախից տեղահանված, տուն ու տեղ կորցրած, միջազգայնորեն արգելված կասետային ու ֆոսֆորային զենքերից փրկված գաղթականները թագաժահրի համավարակի պայմաններում հրատապ են դարձնում նոր գործելակերպ ու մոտեցումներ:



ԵՊՀ բարձրագույն պարգևը՝ 2-րդ համարով «Պատվո շքանշանը»՝ ճիշտ հասցեատիրոջ ձեռքին

Ձեր ճիշտ կողմնորոշմամբ վերջերս նշանակալից օգնություն և Ամանորի նվերներ տրվեցին Երևան - Ստեփանակերտ մայրուղու եզրերին պահպանված Աղավնո (Արիավան), Հին Շեն, Մեծ Շեն, Լիսագոր և Եղցահող հայաբնակ գյուղերի բնակիչներին, աշակերտներին և ուսուցիչներին, իսկ վերաբնակներն ստացան լվացքի մեքենաներ, սառնարաններ և հեռուստացույցներ: Դեկտեմբերի 27-ին Բերձորի կենտրոնում հավաքված վերաբնակները չեն մոռանա իրենց ուղղված Ձեր կոչը՝ «Ով կովի, սառնարանի, լվացքի մեքենայի, հեռուստացույցի կամ որևէ այլ բանի կարիք ունի՝ թող դիմի հիմնադրամին»:

Գործնական հայրենասիրության մեղիքանական բանաձևը անպտուղ բարձրագույնություն չի հանդուրժում. հենց սա՛ է Ձեր հանդեպ հարգանքի և սիրո առհավատյան: Ամրակուռ է պարտություն չհանդուրժող, անկյալ վիճակին չհամակերպվող հայրենապաշտ նահապետի և առաջնորդի Ձեր աննկուն ոգին: Դուք միշտ վառ եք պահում իրավիճա-



Լյսբան շոռայլ Ձմեռ պապ հեքիաթներում էլ չի լինում

կը բարելավելու հույսը, կենդանի հետք եք թողնում Ձեր լուսավոր ճանապարհին:

Հիմնադրամից օգտված կարիքավոր բազմազավակ ընտանիքները, անվճարունակ ուսանողների սերունդները, աշխարհի տարբեր հայկական կենտրոններից՝ ԱՄՆ-ից, Իրանից, Ջավախքից, Ուկրաինայից, Լիբանանից, Սիրիայից, Մոսկվայից, Պետերբուրգից, Երևանից, Հայաստանի մարզերից ու Արցախի շրջաններից ութ տարի շարունակ Շուշիում կայացած ասմունքի համահայկական փառատոնի մասնակից հազարավոր երեխաների անմոռաց հիշողությունները, Բերձորի մատուցներում Ձեր նախաձեռնությամբ և ղեկավարությամբ հիմնված պուրակներն ու այգիները, տնկված 10 000-ից ավելի բերք տվող ծառերը, Արցախի բարերարների և ընկած հերոսների, ԵՊՀ հոբելյանների պատվին կանգնեցված հուշաքարերը նաև Ձեր անմահության հուշարձաններն են:

Սիրելի՛ հոբելյար, ջերմորեն շնորհավորելով Ձեր ծննդյան 85-ամյակը՝ մաղթում ենք անձնական և ընտանեկան կատարյալ երջանկություն, կայուն առողջություն և բոլորիս երկարամյա միասնական ժողովրդանվեր համագործակցություն հանուն մեր հայրենիքի հզորացման ու ազգային մեծ երազանքների իրականացման»:

Հանդիսությունը շարունակվեց հյուրասիրության սեղանի շուրջ, ուր շնորհավորանքները, ողջույններն ու բարեմաղթություններն ուղեկցվում էին գավաթների զնգոցով:

Հոգաբարձության խորհրդի անունից՝

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Շրեյարը (ձախից երկրորդը) իր աշխատավայրում՝ Ս. Մուրադյանի, Մ. Գրիգորյանի և Ա. Ավագյանի հետ

**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԶ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 85 -ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

Մեծարգո Տիար Մելիքյան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում Ձեզ և շնորհավորում 85-րդ տարեդարձի առթիվ:

Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել անձնապես ճանաչել մեր ժողովրդի արժանավոր, շնորհաշատ զավակիդ: Ուրախ ենք այսօր անդրադառնալու, որ Դուք կյանքի ողջ ընթացքին գիտական, մանկավարժական և հասարակական բեղուն գործունեությամբ ազնիվ ծառայություն եք մատուցել հայրենի մեր երկրին ու հավատավոր ժողովրդին: Երևանի պետական համալսարանում ուսումնառությունը ավարտելուց հետո Դուք մնացիք մայր կրթօջախում և տասնյակ տարիներ ունենալով պատասխանատու պաշտոններ՝ Ձեր հոգու և մտքի ողջ կարողությունները ի սպաս բերեցիք նաև գիտակրթական շնորհակալ առաքելության իրականացմանը:

Արցախյան ազատամարտի տարիներին Դուք հոգու կանչով մասնակցություն ունեցաք ինքնապաշտպանական պայքարին՝ հանուն Արցախում բնակվող հայորդյաց ազատ ու անկախ ապրելու իրավունքի: Մեր հաղթանակը կերտվեց Ձեզ պես հերոս հայորդիների անձնվիրումի ու զոհողությունների շնորհիվ, ովքեր իրենց արիությամբ լուսավոր էջեր գրեցին մեր նորօրյա պատմության մեջ: Արցախում առաջին պատերազմին հաջորդող տարիներին Դուք շարունակեցիք զորակցություն բերել Արցախում բնականոն կյանքի հաստատմանը՝ հեղինակ դառնալով բարեսիրական բազմաթիվ ծրագրերի ու նախաձեռնությունների: Ներկայիս, երբ 44-օրյա աղետաբեր պատերազմի հետևանքով Արցախը և Հայաստանը կանգնած են նոր վտանգների և մարտահրավերների առջև, մեր ժողովուրդը պիտի շարունակի նոր հանձնառություններով ու անկոտրում նույն ոգով դիմակայել թշնամու նոր ոտնձգություններին, դժվարություն-

ների հաղթահարումով պաշտպանելով հայրենի մեր երկիրը և վերականգնելով մեր կորուստները:

Մենք գոհունակությամբ ականատես ենք եղել նաև որդիական Ձեր անկեղծ սիրուն ու նվիրումին հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Հետպատերազմյան դժվարին տարիներին Դուք որպես Արցախի նորահաստատ թեմի թեմական խորհրդի ատենապետ, գովարժան աջակցություն բերեցիք նաև Արցախում հոգևոր կյանքի վերազարթոնքին: Մեզ համար այսօր ուրախություն է արձանագրել, որ ի գնահատություն Ձեր ազգօգուտ և եկեղեցանվեր վաստակի, Ձեզ շնորհելու ենք Առաքելական մեր

Սուրբ Եկեղեցու «Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշանը:

Սիրելի պրն. Մելիքյան, ծննդյան հոբելյանը Դուք դիմավորում եք ազգանվեր երախտարժան գործունեության մեծ վաստակով, գնահատված բազմաթիվ պարգևներով ու գիտական կոչումներով և սիրված եք հավատավոր մեր ժողովրդի կողմից: Ի խորոց սրտի աղոթքով Ամենախնամ Աստծու օրհնությունն ու գորակցությունն ենք հայցում Ձեզ և մաղթում, որ Տերն իր հովանու ներքո միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ՝ հաջողություններ պարգևելով Ձեր բոլոր ծրագրերին ու նախաձեռնություններին:

Օրհնությամբ՝ (ստորագրություն)

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 14 դեկտեմբերի, 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մելիքյան,

Շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 85-ամյակի առթիվ: Ձեր հարուստ կենսագությունը միմյանց շաղկապված շրջափուլերի կռու ամբողջություն է:

Տասնամյակներ շարունակ մտավորականի Ձեր ուսերին արժանապատվորեն եք տարել հայ երիտասարդներին կրթելու հայեցի դաստիարակելու, հայապահպանության դժվարին առաքելության Ձեր բաժինը:

Մեծ է Ձեր ավանդը մեր երկրում արևելագիտության զարգացման, սերունդների դաստիարակման և մասնավորապես դիվանագիտական կադրերի պատրաստման գործում:

Ձեր կյանքի անբաժանելի մասն է Արցախը: «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ

ընտանիքների հիմնադրամի» գործունեության շրջանակներում ավելի քան 20 տարի Արցախում իրականացվել են հայրենասիրական-բարեգործական բազմաթիվ միջոցառումներ:

Հարգարժան պրոֆեսոր,

Ձեզ աշակերտած տարբեր սերունդների ներկայացուցիչների գնահատմամբ՝ Ձեզնից ստացած իմաստուն դասերը ոչ միայն գիտության, այլև հայրենասիրության, քաղաքացի – մարդ լինելու մասին են:

Կրկին շնորհավորում եմ Ձեզ և մաղթում խաղաղություն, քաջառողջություն և ամենայն բարիք:

(Ստորագրություն)

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ-ՆԱԽԱԳԱՀ
ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ / Robert Kocharyan, 14 Dec 2021**

Շնորհավորում եմ պրոֆեսոր, վաստակավոր մանկավարժ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի երկարամյա դեկան Գուրգեն Մելիքյանին՝ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ:

Դուք ոչ միայն ճանաչված ու հարգանք վայելող գիտնական եք, այլև ավանդ ունեք արցախյան շարժմանը, արցախյան առաջին պատերազմում ու Արցախի շենագմանը:

Մաղթում եմ Ձեզ քաջառողջություն և երկար տարիների կյանք:

ՌՈՔԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ
14. 12. 2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ-ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 14 դեկտեմբերի, 2021 թ.

ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Հարգարժան պարոն Մելիքյան,

Ձերմորեն շնորհավորում եմ Ձեզ ծննդյան 85-ամյակի առթիվ:

Տասնամյակների Ձեր գիտական, մանկավարժական, հասարակական պատկառելի գործունեությամբ Դուք արժանի տեղ ունեք մեր ժողովրդի նվիրյալ զավակների շարքում, որի համար արժանիորեն վայելում եք համաժողովրդական սեր ու հարգանք:

Ես ջերմությամբ եմ հիշում մեր բոլոր հանդիպումները, որոնց մի զգալի մասը մեր հայրենիքի համար ամենաձանր, միաժամանակ՝ ամենահերոսական տարիներն էին, երբ ստեղծվում էր Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակը, և Դուք մեծագույն նվիրումով, ոգևորությամբ, հայրենիքի նկատմամբ պարտքի զգացողությամբ Ձեր ջանքերն էիք ներդնում պաշտպանության բանակի կայացման գործում: Վստահաբար կարող եմ ասել, որ Դուք, կանգնած լինելով ազգային - ազատագրական մեր նորօրյա շարժման ակունքներում, արեցիք հնարավոր ամեն ինչ կանոնավոր բանակի ստորաբաժանումների ձևավորման համար, որը չափազանց գնահատելի է:

Արցախը, որպես մեր նվիրական հայրենիքի մի հատված՝ Դուք Ձեր սրտում եք կրում, և պատերազմի ամենաձանր տարիներին համալսարանից ռազմաճակատ Ձեր պարբերական դարձած այցերը հայրենասիրության վառ օրինակ էին Ձեր բազմաթիվ ուսանողների համար:

Անուրանալի է Ձեր ավանդը կրթության բնագավառում, այդ թվում՝ արևելագետների նոր սերնդի կրթման, Հայաստանում իրանագիտության զարգացման, երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակման գործում, որոնց համար իրավամբ արժանացել եք հայրենիքի բարձր պարգևներին:

Որպես ակտիվ հայրենասեր մտավորական, բարեգործ, իմաստուն ու լուսավոր մարդ՝ Դուք մնացել եք Ձեր առաքելությանն անդավաճան, և այսօր էլ սրտի մեծ ցավով հետևում եք Արցախում ու մայր Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին:

Կրկին շնորհավորելով նշանակալի տարեդարձի առթիվ՝ մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, արևաշատություն և երջանիկ կյանք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ (ստորագրություն) ՍԵՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ք. Ստեփանակերտ

15 դեկտեմբերի 2021 թ.

№ 1-06/1000

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր
Գուրգեն Մելիքյանին

Հարգարժան Գուրգեն Վրեժի

Արցախի ժողովրդի, իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ Ձեզ հիշարժան հոբելյանի՝ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ:

Որպես հայ արևելագիտության նահապետ՝ Դուք անգնահատելի ներդրում ունեք ոլորտի կայացման գործում, կրթել ու դաստիարակել եք արևելագետների մի քանի արժանավոր սերունդ:

Մեծ է Ձեր ավանդը նաև Արցախի ազգային - ազատագրական շարժման կազմակերպման և Ացախի զարգացմանն ուղղված ծրագրերի իրա-

կանացման գործում: Այսօր էլ Դուք շարունակում եք ծառայել հայրենիքին՝ ակտիվ դերակատարություն ունենալով մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, բարեգործական և առողջապահական տարբեր նախագծերի կյանքի կոչման մեջ:

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ Ձեզ և մաղթում խաղաղություն, քաջառողջություն և հաջողություններ ու ամենայն բարիք Ձեզ և Ձեր հարազատներին ու մերձավորներին:

(ստորագրություն) ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՀՀ ԱՌԱՋԻՆ ԱԳՆ ՆԱԽԱՐԱՐ, «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ
ՐԱՖՖԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ**

Պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին, ՀՀ վաստակավոր մանկավարժ,
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի պրոֆեսոր,
Երևան, 15 դեկտեմբերի, 2021

Մեծարգո՝ Հայրենակից,

Ուրախ եմ ծննդյան 85-ամյակի կապակցությամբ Ձեզ հղելու սրտագին իմ շնորհավորանքներն ու բարեմաղթությունները:

Դուք արդի հայ մտավորականության աստղաբույլի ամենապայծառ դեմքերից եք, ում խոր գիտելիքները, անբասիր կենսագրությունը, հայրենասիրությունը, ազգին ու ազգայինին անմնացորդ նվիրվածությունը ճշմարիտ ապրելու և ճշմարիտ գործելու պատգամ են՝ ուղղված սերունդներին:

Ձեր անվան հետ են կապված ոչ միայն երկրում արևելագիտության զարգացումն ու դիվանագիտական կադրերի պատրաստումը, այլև Արցախյան շարժմանն առնչվող գործընթացների

հովանավորումը և Արցախում բարեգործական բնույթի միջոցառումների իրականացումը:

Գուրգեն Մելիքյան մարդն ու գիտնականը միշտ արժանապատվորեն է իր ուսերին տարել երիտասարդներին հայեցի կրթել-դաստիարակելու, նրանց մեջ ակտիվ կենսադիրքորոշում ու ազնիվ մղումներ սերմանելու՝ իրեն վիճակված բարձր առաքելությունը:

Եվս մեկ անգամ շնորհավորելով Ձեզ՝ լեզենդար Հային ու մեծ ուսուցչապետին՝ մաղթում եմ քաջառողջություն, արևշատություն, երջանիկ կյանք, որի իրավունքը վաստակել եք բազմաբեղուն գործունեությամբ և արդար արարումներով:

Միրով՝ (ստորագրություն) Բաֆֆի Կ. Հովհաննիսյան

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Գ Ի Ր

Մեծարգո՝ հոբեյար,
Սիրելի՛ Գուրգեն Մելիքյան,

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան 85-ամյակի առթիվ:

Մեծ է Ձեր ավանդը անկախ Հայաստանում այնպիսի կարևոր հիմնարար ուղղության բնագավառում, ինչպիսին է արևելագիտությունը, որը Ձեր ղեկավարության ու գիտական վաստակի շնորհիվ վերընթաց փուլ ապրեց և իր արժանի տեղն է գրավում մեր պետության գիտության ոլորտում:

Երկար տարիներ ղեկավարելով Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆա-

կուլտետը՝ Դուք, շնորհիվ Ձեր՝ հայ գիտնականին հատուկ անբասիր, քրտնաջան և ինքնանվեր ամենօրյա աշխատանքի և հայրենասեր կեցվածքի, մեծապես նպաստեցիք հայրենական արևելագիտության մասնագիտական մակարդակի բարձրացմանը:

Մեծ է նաև Ձեր ներդրումը Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի միջև համագործակցության խորացման գործում:

Մաղթում եմ Ձեզ առավել կորով և առողջություն՝ շարունակելու Ձեր բեղմնավոր գիտական գործունեությունը ի նպաստ մեր անկախ պետականության հիմքերի ամրապնդման ու զարգացման:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ՝ (ստորագրություն, կնիք) ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Ա Վ Ա Դ Ե Մ Ի Կ Ո Ս Ռ ՈՒ Բ Ե Ն Ս Ա Ֆ Ր Ա Ս Տ Յ Ա Ն Ի ՈՒՂԵՐՁԸ

Մեծարգո՝ պրոֆեսոր

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ,

Շնորհավորում եմ Ձեզ՝ հայրենական արևելագիտության ՆԱՀԱՊԵՏԻՆ և մարդկային բարձրագույն արժանիքներով օժտված ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ՝ ծննդյան 85-ամյակի առթիվ:

Մաղթում եմ քաջառողջություն և երկար տարիների բեղմնավոր գործունեություն՝ ի փառս Հայոց գիտության ու կրթության:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
դոկտոր, պրոֆեսոր՝ (ստորագրություն) Ռուբեն Սաֆրաստյան

14.12.2021

ք. Երևան

ԵՊԸ ՆԱԽԿԻՆ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Այստեղ շատ լավ խոսքեր ասվեցին և ես ուզում եմ իմ խորհրդածություններով ձեզ հետ կիսվել՝ ինչ մարդ է Գուրգեն Մելիքյանը, ինչ բնավորության տեր է, ինչ հայացքներ ունի: Եթե ազգանունին ենք նայում, կարծեք թե, ազնվական ծագում ունեցող մի անհատականություն՝ Մելիքյան՝, մելիքների շառավիղը: Բայց սա չի կարևորը նրա համար. Գուրգեն Մելիքյանը ծնվել է որպես ազնվագարմ անձնավորություն, ի ծնե նա ազնվագարմ է և մանուկ հասակից ունեցել է աշխարհի ընկալման իր յուրահատուկ և հաստատուն հայացքը: Գուրգեն Մելիքյանը պատվի ու պարտականության մարդ է: Պատիվն ու պարտականությունը նրա համար շատ բարձր ու վեհ

են, որոնք թույլ են տվել իրեն պատանի հասակից արդեն լինելու արդարամիտ, ատելու զեղծարարությունը, կեղծիքը: Մի անգամ նա պատմեց, որ Իրանում դեռ պատանի հասակում «Ֆոլսֆազեն» ավտոմեքենաների գործարանում աշխատելու ժամանակ, ինչպես են իրեն առաջարկել գնալ զեղծարարությունների և ինչպես է ինքը զայրոյթով մերժել ու իր ամբողջ գործունեությամբ այդ գործարանում ցույց տվել, թե ինչպես պիտի լինի իսկական ազնիվ ու լավ մարդը: Գուրգեն Մելիքյանը պատանի հասակից հասկացել է, որ եթե ուզում ես թունելի ծայրում տեսնել լույսը, պիտի անընդհատ այդ թունելը փորես: Եվ աշխատանքի, գործունեության, եռանդի մեջ է տեսել իր երջանկությունը: Գուրգեն

Մեկիքյանը ամեն ինչ արել և անում է սիրով, որովհետև աստվածավախ մարդ լինելով՝ նա հիշում է Աստվածաշնչյան այն պատգամը, որ եթե նույնիսկ քո ամբողջ գույքը և քո հոգին էլ տաս մարդկանց, բայց սիրով չանես դա, դա քամի է ու ոչինչ: Նա ամեն ինչ անում է սիրով և արել է սիրով: Այդ սերը զարմանալի պտուղներ է տվել, որովհետև ի տարբերություն ոսկու, արծաթի, կավի, սերը եթե բաժանում ես, նա չի քչանում, ընդհակառակը, շատանում է: Եվ Իրանում եղած ժամանակ ես տեսա, թե իր ալպինիստ ընկերները, որոնք արդեն ծերունագարդ մարդիկ էին՝ իրենից էլ տարիքով մեծ, ինչպիսի սիրով, ինչպիսի եղբայրական ջերմ զգացմունքներով էին վերաբերվում Գուրգենին: Մահմեդական այդ երկրում նույնիսկ նրանց կանայք փողոցում մեզ հանդիպելիս երկյուղած վերաբերմունքով համբուրում էին նրա ձեռքերը. զարմանալի մի բան: Գաղափարի մարդ է եղել և կա Գուրգենը: Արդարության համար ու սոցիալական ճնշվածության դեմ պայքարի մարտիկ: Դրա համար էլ նա բանտ է ընկել ժամանակին: Դրա համար նրա գլխին մշտապես կախված է եղել մահապատժի դամոկլյան սուրը: Հայրենիք վերադառնալով՝ նա ամբողջովին խրվել է հասարակական ու համալսարանական կյանքի հորձանուտում: ԵՊՀ-ում պահպանվել են նրա գործունեությունը լուսաբանող վավերագրերը ու կինոֆոտոժապավենները: Եթե մեր թանգարանում դուք դրանք տեսնեք, ամբողջությամբ կարծիք կկազմեք Գուրգեն Մեկիքյան մարդու, հիրավի, հոյակապ կենսագրության մասին: Ինչ-որ անում է, նա

անում է գաղափարով: Եվ Գուրգեն Մեկիքյանը սրա հետ մեկտեղ իսկական հայ մտավորական է, ավելին ասեմ, ինտիլիգենտ այն քիչ մարդկանցից մեկը, որոնք այսօր կան հանրապետությունում, որովհետև Գուրգեն Մեկիքյանը ունի խիղճ, և այդ խիղճը նրան ստիպում է իր ցավից ավելի բարձր դասել դիմացինի ցավը, դիմացինի դարդը, դիմացինի պրոբլեմները: Որևէ մեկդ տեսե՛լ եք, որ նա ինչ-որ մեկին նախանձի, որևէ մեկդ տեսե՛լ եք, որ նա զագրախոսի կամ բամբասի: Ո՛չ, երբե՛ք: Բայց միշտ Գուրգեն Մեկիքյանը զովերգել է, հիացել է, հպարտացել է դիմացինի հաջողություններով և զովերգել է այդ մարդկանց ամենավոք իսկ հաջողության համար: Գուրգեն Մեկիքյանը այն քիչ մարդկանցից մեկն է, որը իսկապես շենշող, հպարտ տղամարդ է, բայց նաև շատ նուրբ հոգու և սրտի լարեր ունի:

Սիրելի՛ Գուրգեն, - դարաբաղցին ասում է՝ արցունքները հափրումն են, բայց այդ արցունքները ազնիվ արցունքներ են, ազնիվ մղումների արցունքներ:

Գուրգեն Մեկիքյա՛ն, սիրելի՛ս, ապրի՛ր այնքան, ինչքան սիրող ուզում է, ինչքան կուզեն քո հարազատները, քո տիկինը, քո սիրելի աղջնակը, քո որդին, ինչքան որ կուզենան քո ընկերները, բարեկամները, ինչքան կուզենանք մենք, որովհետև քո կողքին լինելով մենք երկարացնում ենք մեր մարդանալու ճանապարհը:

Շնորհակալ եմ քեզանից, Գուրգե՛ն ջան, ես ուզում եմ, որ բոլորը զնահատեն քեզ, որպես մարդ, որպես հայ, որպես քաղաքացի, շե՛ն մնաս:

**ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ, ՊԸՏՄ. ԳԻՏ. ԴՈԿՏՈՐ
ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ**

Թվում է՝ Գուրգեն Մեկիքյանի մասին խոսելը շատ հեշտ է՝ այնքան շատ են նրա բարի գործերը, տարբեր ոլորտներում ներդրումները, որ կարելի է հեշտությամբ կառուցել շնորհավորական ելույթ: Սակայն Մեկիքյանի մասին ստանդարտ խոսք նախ՝ չի ստացվում ասել, և երկրորդ՝ չեմ էլ ուզում ասել: Ոստի ես՝ որպես նրա սան, նրանից հետո արևելագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնը ստանձնած անձ՝ կփորձեմ խոսել Գուրգեն Մեկիքյան մանկավարժի, Ուսուցչի մասին, բայց նախ ֆիքսենք, թե ինչի՛ ուսուցանման, ի՛նչը սովորեցնելու մասին է խոսքը:

Իմ կարծիքով՝ այն ամենակարևորը, որ կարելի է սովորել Գուրգեն Մեկիքյանից, և որը հենց մեկիքյանական հատուկ դասընթաց է՝ առարկա է կամ այլաբանական դաս՝ ճիշտ ապրելու, ճիշտ դասախոսելու, ճիշտ պաշտելու, ճիշտ քաղաքացի և ճիշտ հայ լինելու մասին է: Ես մեկն եմ այս առարկայի

ունկնդիրներից կամ մեկն այն երջանիկներից, որը բախտ ունի այդ դասը, այդ հմտությունը անձամբ Գուրգեն Մեկիքյանից ստանալու: Այդ դասընթացն ունի երկու կարևոր պայման կայանալու համար. մեկը ունկնդիրը պետք է հասկանա այն երբեմն այլաբանական, երբեմն նշանների լեզու, որով դասավանդում է Մեկիքյանը: Եվ մյուսը՝ ունենա արևելագիտական որոշ հմտություններ, որպեսզի հասկանա դերվիշի, Ուսուցչի և աշակերտի կամ մյուրշիդի, և մյուրիդի հարաբերակցության պարտադիր ու անկեղծ տարրերը:

Եվ ըստ այդմ՝ ես Մեկիքյանից սովորել , սովորում եմ և հույս ունեմ՝ դեռ երկար սովորելու եմ լավ ու ճիշտ դասախոս, ճիշտ պաշտելու, ճիշտ քաղաքացի, ճիշտ հայ լինելու արվեստը:

Սկսած կրթական և գիտության ոլորտում իմ առաջին քայլերից մինչև գիտական աստիճանների և

կոչումների հասնելը ես առաջնորդվել եմ հենց այն սկզբունքներով ու բարոյականով, որ ինձ ուղղակի և անուղղակի սովորեցրել է Գուրգեն Մելիքյանը: Երբ սխալվել եմ կամ մոտ եմ եղել սխալվելու, Մելիքյանն ինձ զգուշորեն սթափեցրել է և ետ պահել դրանից, երբ հաջողել եմ, նա չի հապաղել շռայլելու գովեստի խոսքեր, որոնց մի մասը հաստատապես ասված են եղել ավանսով: Մեր՝ սովորողի և սովորեցնողի կապը ամենօրյա է. երբ իրեն բնորոշ թակոցով իմ սենյակ է գալիս Մելիքյանը, կամ ես եմ գնում նրա սենյակ, կամ քայլում ենք միջանցքով,- դրանք արվածը գնահատելու, նոր խնդիրներ դնելու, սխալները կամ թերացումները կանխելուն միտված զրոյցներ են:

Այս ամենն էլ ավելի ակնհայտ են այն հարցերում, որոնք վերաբերում են Հայրենիքին, ազգին՝ հատկապես բարդ վիճակներում: Վատահաբար կարող ենք ասել, որ այսօր արևելագիտության ֆակուլտետում ձևավորվել է բառիս բուն իմաստով հաճելի մթնոլորտ, երբ ավագների և կրտսերների շփումը կատարվում է ճշմարիտ և ավանդական սկզբունքների վրա: Դա արևելագիտական օազիս է, և ես սիրում եմ այդ օազիսը իր բոլոր բնակիչներով՝ դասախոսներով, աշխատակիցներով, հատկապես ուսանողներով և իր Նահապետով՝ Գուրգեն Մելիքյանով:

Գաղտնիք չէ, որ Գուրգեն Մելիքյանը հույս և հենարան է շատերի համար, բազում հարցերում: Եվ ուզում եմ մի կիսագաղտնիք բացել. 44-օրյա պատերազմի ողբերգական ավարտից հետո ես շտապում էի հանդիպել Մելիքյանին, բայց ներսումս այլ տագ-

նապ էլ կար. արդյոք նրան կտեսնեմ հուսահա՛տ, արդյոք հույսի և հենարանի նրա կերպարը կտեսնեմ փլուզվա՛ծ: Սակայն տեսա, որ նա խոցված, վիրավոր է, բայց ո՛չ հուսահատ. արցունքոտ աչքերում, այնուամենայնիվ, դեռ բոցկլտում էր հաղթանակի և լավատեսության թեև փոքր, բայց հուսադրող կայծը: Ուրեմն՝ Հայաստանը և Արցախը հաղթելու են և հարատևելու:

Նրա անձի հետ կապված ասվում է ամենաշատը երեք բառ՝ լեզենդ, խորհրդանիշ, ուսուցիչ, բայց այս բառերն ասելիս ամեն անգամ պետք է մի վայրկյան դադար տալ և ինքդ քո ներսում, ինքդ քեզ հաշիվ տաս, թե դրանց տակ ինչե՛ր են ենթադրվում և ինչքան են դրանք առկա Մելիքյանի պարագայում, ու նորից, բայց արդեն այլ շեշտադրությամբ, և պատասխանատվությամբ կրկնել՝ լեզենդ, խորհրդանիշ, ուսուցիչ: Այո՛, Մելիքյանն իր արածով ու գործունեությամբ լեզենդ է, իր կերպարով՝ ուսուցիչ, և ինքն իրենով՝ Հայաստանի, Արցախի, ԵՊՀ-ի, արևելագիտության ֆակուլտետի, հայրենասիրության, նվիրումի, Հայի խորհրդանիշ:

Ամենավերջում, սիրելի՛ պարոն Մելիքյան, իմ սիրելի Ուսուցիչ, ես Ձեզ ասում եմ ամենաշատ կիրառվող, թվում է՝ ամենապարզ, բայց միևնույն ժամանակ անկեղծ ասելու պարագայում իր մեջ ամենամեծ խորքը պարունակող, բարոյականը և էներգետիկան կրող բառը՝ և՛ որպես հայ, և՛ որպես Հայաստանի քաղաքացի, և՛ որպես արևելագետ՝ շնորհակալություն այն ամենի համար, որ արել եք և դեռ անելու եք:

**ԵՊՀ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ՄԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ**

ԽՈՍՔ ԻՄ ԲԱՐԻ՝ ԱՌԱՔԻՆԻ ԸՆԿԵՐ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԾՆՆԴՑԱՆ 85-ԱՄՅԱԿԻՆ

Բոլոր ուղերձներում և ելույթներում նշվում է Գուրգենի նվիրվածությունը, անշահախնդիր ծառայելու իր երկրին, իր ազգին: Գուրգենի նմաններն են դարերի ընթացքում ապահովել մեր ազգի հարատևությունը, չնայած այդպիսիները տոկոսային հարաբերակցությամբ շատ չեն, բայց գորեղ են իրենց հայի գեներով, իրենց տեսակով:

Եվ այսօր, երբ մեր հայրենիքը վտանգված է, մեր ազգն ապրում է մեծ ողբերգություն, Գուրգենի ու իր նմանների ամենօրյա գործունեությունը հա-

վատ է ներշնչում բոլորիս, որ մեր հայրենիքը, իսկ դա այսօրվա Հայաստանի Հանրապետությունն է, Արցախի Հանրապետությունն է և Արևմտյան Հայաստանը, լինելու է միասնական և հաղթանակած:

Սիրելի՛ Գուրգեն, ցանկանում եմ քեզ առողջություն և հաջողություններ քո հայրենանվեր գործունեության մեջ: Ես հպարտանում եմ քեզանով, հպարտ եմ, որ ես քո կողքին եմ:

Քո ընկեր՝ (ստորագրություն) ՄԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հրապարակվող բանաստեղծության հեղինակը բան. գիտ. դոկտոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ, միջնադարագետ ՍԱՐԳԻՍ ՄԻԻԹԱՐՅԱՆԵ, որը նաև երկու քերթողագրքի հեղինակ էր, մեր հիմնադրամի համակիրներից:

2011 թ. Գ. Մելիքյանի 75-ամյակի առթիվ էր նա գրել այս ձոներգը, որը ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողներին.

ՄԻՐԵԼԻ ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻԹՅԱՆԵ

Մեր մարմնի բեկորները մենք թողել ենք
ճամփաներին հազարամյակների,
Ծալքերում հեռավոր ու մերձավոր անցյալի, -
Թողել ենք անդարձ
Գաղթի կեռումեռ, ազգամեռ,
Հատվող ու ընդհատվող ուղիներում...
Ամեն ինչ մշուշվել է
Ամայության մեջ մեր մորմոքների,
Մեր տենչանքների օդապարույր բարձունքներում
Եվ անդարձ չվող երամների
Կոնկականչերում:
Ջնջվել են մեր ոտնահետքերը
Հայաստանից մեկնող ճանապարհներին
Ու հեռացողների
Տխրահառաչ անկումներում:

(Այս ամենն իրողություն է անշրջելի).
Բայց որպես մի նոր Նախո Բեռի
Կանգնած է նա՝ նման ժայռի,
Ու ցասկոտ հայացքով իր
Սաստում է մշտաբթուն
Կուրի հովտից մեր հնամենի՝
Ժանիքները սպառնազին կրճտացնող
Գորշամոռութ աղվեսակերպ գայլին:
Եվ մեր նորագույն հերոսամարտի լուսաշող էջում
Այսպես պիտի մնա նա մշտաբթուն
Ու ժպտա պիտի գալիք ժամանակներում
Հայոց Արևելյան Կողմանց պաշտպան
Գայլառոյուն՝
ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻԹՅԱՆԵ՝
Պայծառաժպիտ իմ բարեկամը սքանչելի...

ՍԱՐԳԻՍ ՄԻԻԹԱՐՅԱՆ
11.12.2011

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՅՅԸ ԱՐՑԱԽ

Ավանդույթ է դարձել հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը փոքր կազմով ամեն տարեմուտի՝ Գուրգեն Մելիքյանի գլխավորությամբ մեկնում է Արցախ այն հաստատ համոզմունքով, որ այնտեղ իրեն սպասում են:

Եվ իսկապես կան սպասողներ: Կարիքավոր ընտանիքներ, այժմ արդեն հայրենի տները թուրքին թողած վերաբնակներ, Ձմեռ պապի տոնական նվերներին սպասող, աշխարհից դառնացած և հեքիաթներին դեռևս հավատացող երեխաներ:

Իսկ ամենից շռայլ ու հուսադրող, հավաստի ու հազար անգամ ստուգված լավագույն «Ձմեռ պապը» 85-ամյա Գուրգեն Մելիքյանն է, որ երբեք մենակ չի թողնում Արցախի իր թոռնիկներին ու նրանց ամենացանկալի հյուրն է:

Հոգաբարձության խորհրդի մի քանի անդամներ ու բարեկամներ՝ Գ. Մելիքյան, Ս. Մուրադյան, Ջ. Ըռքոյան, Խ. Վարդանյան, Հայաստանն Արցախին կապող այժմ միակ ճանապարհով 2021 թ. դեկտեմբերի 27-ին ուղևորվեցին Արցախ՝ ոչ դատարկաձեռն: Երևանում, հիմնադրամի պատվերով պատրաստվել էին հայկական արտադրության ձմեռային որակյալ տաք հագուստներ, որոնք դպրոցականները ստացան որպես ամանորյա նվեր:

Մեզ ուղեկցող բեռնատարը ելակի մուրաբայի արկղերի և քաղցրավենիքի հետ միասին բերում էր այն լվացքի մեքենաները, սառնարաններն ու հեռուստացույցները, որոնք կարիքավորներին պիտի հանձնվեին հիմնադրամի հոգաբարձության խորհրդի որոշմամբ:



Երիտասարդ ուսուցչուհին ստացավ Ամանորի նվեր հեռուստացույցը

Ի՛նչ էինք երագում, և ի՛նչ ստացանք, որտեղից՝ ուր հասանք:

Ինչևէ, Ստեփանակերտից առաջ պիտի այցելեինք ճանապարհի եզրերին պահպանված հայարմատ ու հայաքնակ գյուղերը, ուր տարեմուտին աշակերտները և ուսուցիչները, անհամբեր սպասում էին Հայաստանից ժամանած Գուրգեն Մելիքյանի խմբին:

Առաջին հանդիպվալարը Արիավան (Աղավնո) գյուղի դպրոցն էր: Գյուղ մտանք մեր ժողովրդի գերմանացի բարեկամ պրոֆ. Թեսա Հոֆմանի անվան նորաստեղծ պուրակ-ծառուղու կողքով: Արիավանի դպրոցում աշակերտների և ուսուցիչների հետ միասին մեզ դիմավորեց նորօրյա լեզենդներից մեկը՝ համայնքապետ Անդրանիկ Զավուշյանը, որը գյուղացիների դիմադրական և ինքնապաշտպանական ոգին է: Հայրենի հողը պաշտպանելու նրա հզոր կամքն է այսօր պաշտպանում Արիավան հայկական գյուղն ու դպրոցը:



Արիավանի ուսուցչուհու ստոնարանը տեղ հասավ

Հաջորդ կանգառը Բերձորն էր՝ երբեմնի Քաջաթաղի շրջկենտրոնը, որտեղ հարևան Մեծ Շեն, Հին Շեն գյուղերից հավաքված աշակերտներն ու ուսուցիչները ականատես եղան Նոր տարվա իսկական տոնախմբության: Իր տարերքի մեջ էր բաշխումը

գերագույն հաճույքով իրականացնող հորեյարը՝ Գուրգեն Մելիքյանը, որին որպես իրական Ձմեռ պապի, զարմացած հայացքներով նայում էին մանկահասակ երեխաները:

Հիմնադրաման ամեն ջանք ու միջոց գործադրել էր, որ համընդհանուր աղետի մեջ աշխարհից կտրված հայապահ գյուղերում թուրք-ազերիների թշնամական չար հա-



Քաշխման սկզբունքը՝ ոչ մի երեխա դժգոհ չմնաց

յացքի և սպառնալիքների ներքո հայ հողը հերոսաբար պահող մարդիկ իրենց անտեսված, լքված ու միայնակ չզգան, որ ամեն հայ տուն տարեմուտին գոնե մի բուռ հույս և ուրախություն մտնի:

Մթնում էր արդեն, երբ հասանք Լիսագոր գյուղը: Ռուսական անցակետի մոտ մեզ դիմավորողներին հանձնելով բերած նվերները՝ փակված հայրենական տան՝ Շուշիի կողքով, արցունքներս կուլ տալով, մտանք Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտ, ուր պիտի գիշերեինք «Պարկ» հյուրանոցում:

Հիշեցինք 2020թ.պատերազմից առաջ այցելությունների այն կենսախինդ, աշխույժ ու եռուն անհոգ գիշերները, որ ծառատունկի կամ սահմանապահ զինվորներին մշակութային հանդիպման եկած ԵՊՀ ուսանողները լուսացնում էին աշխույժ կատակներով ու համով զրույցներով, երգով ու ասմունքով, քննարկում գալիք ծրագրերը:

Հաջորդ օրն առավոտյան լվացքի մեքենաներից վերջինը հանձնվեց Ստեփանակերտում բարերարներ Քերոլան և Ջորջ Նաջարյանների հիմնած «Արփեն» մոր և



Լվացքի մեքենան "Արփեն" կենտրոնին

մանկան կենտրոնին, որը վաղուց անցել է «Գուրգեն Մելիքյան հիմնադրամի» հոգատարությամբ :

Անգնահատելի է այդ կենտրոնի ազգանպաստ գործունեությունը. նրա հոգածությունը զգացել են շուրջ 35 հազար երեխա, որոնցից շատերն արդեն հայրենիքի զինվորներ են:

Ստեփանակերտում երկար մնալ չէինք կարող. վերադարձին պիտի մտնեինք Եղջահող գյուղը, ուր «Զմեռ պապին» սպասում էին դպրոցի երեխաները և ուսուցիչները:

Այստեղ էլ մեր խմբին դիմավորեցին սպասված հարազատի պես: Երեխաները հրճվեցին ստացած նվերներով, ուսուցիչները, համայնքապետ Արտակի հետ միասին, գյուղական բարիքներով ծանրաբեռ սեղանի շուրջ շնորհավորեցին թանկագին հոբելյարի ծնունդը:

Խաչիկ Վարդանյան



Հենց միայն այս երեխաներին այսպիսի հրճվանք պատճառելու համար արժեր տարեմուտին մեկնել Արցախ



2022թ. ՎՃԱՐՎԱԾ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐ

Հ/հ	Ամսաթիվ	ԲՈՒՀ	Նպատակ	Գումար
1	1/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն, ֆարմ. մագիստր. 1-ին կուրս	30000
2	1/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ. 4-րդ կուրս	30000
3	1/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Խ. Պայլանի անվ. կրթաթոշակ Հարությունյան Ամալյա, հայ բան., 4-րդ կուրս	20000
4	1/13/2022	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա, մագիստր., 2-րդ կուրս	30000
5	1/13/2022	ՀԱԱՀ հիմնադրամ	Հայրապետյան Դանիել, ֆինանսներ, 1-ին կուրս	88000
6	2/17/2022	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն, ֆարմացիա մագիստր., 1-ին կուրս	30000
7	2/17/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ստ. Ալաջաջյան անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. ֆակ., 4-րդ կուրս	30000

8	2/17/2022	ԵՊՀ հիմնադրամ	Խ. Պայանի անվ. կրթաթոշակ, Հարությունյան Ամայա, հայ բանասիր. 4-րդ կուրս	20000
9	2/17/2022	ԵՊՀ հիմնադրամ	Դր. Ն. Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգանյան Տիգրան, քիմիա, մագիստր., 2 -րդ կուրս	30000
10	2/17/2022	ԵՊՀ հիմնադրամ	Սարգսյան Վահրամ աշխարհ. և երկրաբ. ֆակ.; քարտեզագր. և կադաստր. գործ., 3-րդ կուրս	100000
11	2/28/2022	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Գասպարյան Գոհար, Երևանի ճարտ. քղեջ, հագուստի մոդել և նախագծ., 1-ին կուրս	50000
12	2/28/2022	ԵՊԲՀ հիմնադրամ	Վարդանյան Աննա, ֆարմացիա, 1-ին կուրս	50000
13	2/28/2022	ՀՊՄՀ հիմնադրամ	Ավետիսյան Անահիտ, անգլ. լեզու և գրակ., 2-րդ կուրս /բացառություն/	80000
14	2/28/2022	ՀՊՄՀ հիմնադրամ	Ջանգիրյան Ալվինա, պարարվեստ, 2-րդ կուրս, հեռակա /բացառություն/	80000
15	2/28/2022	ՀԱՊՀ հիմնադրամ	Հովսեփյան Հովսեփ, Երևանի քղեջի հաշվող տեխ. և ավտոմատ համ. ծրագր. ապահ. 1-ին կուրս/բացառություն/	80000
16	2/28/2022	ՀԱԱՀ ՀԻՄՆԱԴՐԱՄ	Սարգսյան Իշխան, ագրոէկոն սնդարդյունաբ. էկոնոմիկա, 4-րդ կուրս	80000
17	2/28/2022	ԱՌԲՀ Երևանի կրթագիտ.ինստիտուտ	Ղևոնդյան Անահիտ, գործարար վարչարարության մագիստր., 2-րդ կուրս /բացառություն/	80000
18	2/28/2022	Գրիգոր Նարեկացի համալսարան	Հարությունյան Անահիտ, ՆՁՊ, 2-րդ կուրս /բացառություն/	80000
19	2/28/2022	ՀՀ պետ. տնտ.համալս.	Իզոյան Անի, ֆինանսներ, 2-րդ կուրս/բացառություն/	80000
20	2/28/2022	Ճգնաժամային կառ. ակադեմիա	Գրիգորյան Հասմիկ, կառավարում, 4-րդ կուրս, հեռակա / բացառություն/	100000
21	2/28/2022	ՄՊՀ Երևանի մ/ճ	Թորգոմյան Ժիրայր, միջազգային հարաբ. մագիստր., 1-ին կուրս	100000
22	2/28/2022	ՀԱՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Դավիթ, տեղեկատվական տեխնոլ., 3-րդ կուրս /բացառություն/	100000
23	2/28/2022	ՀԱՊՀ հիմնադրամ Կապան մ/ճ	Հարությունյան Գուրգեն, տեղեկատվ. տեխնոլ., 5-րդ կուրս	100000
24	2/28/2022	ՄՊՀ Երևանի մ/ճ	Բախշյան Հրայր, տնտեսագիտություն, 1-ին կուրս	100000
25	2/28/2022	ՀԱՊՀ հիմնադրամ	Մկրտչյան Գոռ, ՏՀՏԵ, ՀՏՏ924Ժ2, 3-րդ կուրս	100000
26	2/28/2022	Գրիգոր Նարեկացի Համալսարան	Մուսայեյան Գրիգորի, ՆՁՊ, 4-րդ կուրս, հեռակա	100000
27	2/28/2022	Հայկ. բժշկական ինստիտուտ ԱԿ	Խաչատրյան Գրիգոր, ստոմատոլոգիա, 2-րդ կուրս /բացառություն/	100000
28	2/28/2022	ՀՀ պետ. տնտեսագիտ. համալսարան	Պայանի Հայկ, հաշվապահ. հաշվառ և աուդիտ, հաշվառում և հարկում, 4-րդ կուրս	100000
29	2/28/2022	ԵՊԲՀ հիմնադրամ	Ղազարյան Մոնիկա, ատամնաբուժ., 4-րդ կուրս	100000
30	2/28/2022	ՀԱԱՀ հիմնադրամ	Ալեքսանյան Ռազմիկ, ագրարային ճարտար., 3-րդ կուրս /բացառություն/	100000
31	2/28/2022	ՀՀ պետ. տնտեսագիտ. համալսարան	Արզումանյան Աննա, մարկետինգ և բիզնես կազմ. մագիստր., 1-ին կուրս /բացառություն/	120000

32	2/28/2022	ՀԱԱՀ Հիմնադրամ	Հայրապետյան Դանիել, ֆինանսներ, 1-ին կուրս /բացառություն/	120000
33	2/28/2022	Պետ. Կառ. Ակադեմիա	Մաթևոսյան Հռիփսիմե, գործարար վարչ.մագիստր., 2-րդ կուրս /բացառություն/	120000
34	2/28/2022	ՀԱԱՀ Վանաձորի մ/ճ	Լալազարյան Էրիկ, գյուղ. մեքենայացում և սարք., 4-րդ կուրս հեռակա /բացառություն/	120000
35	2/28/2022	ՃՇՀԱՀ հիմնադրամ	Ոսկանյան Լուսինե, դիզայն, 2-րդ կուրս /բացառություն/	250000
36	3/1/2022	Ռ. Մելիքյանի անվ. պետ. երաժշտ. քոլեջ	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Ղազարյան Գոռ	10000
37	3/1/2022	Կոմիտասի անվ. պետ.կոնսերվատորիա	Լ. Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Սիմոնյան Սոֆյա	10000
38	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Ղազարյան Ասյա, աստվածաբան., 2-րդ կուրս	50000
39	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Հարությունյան Աննա, աշխարհ. և երկր. սերվիս, 3-րդ կուրս	50000
40	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Տոնոյան Օվսաննա, աշխարհ. և երկր. սերվիս, 3-րդ կուրս	50000
41	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Տոնոյան Վարդանուշ, արաբագիտ., 1-ին կուրս	50000
42	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Սյուզաննա, իրան. պատմ. մագիստր., 1-ին կուրս	50000
43	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Սկրտչյան Միլենա, աշխարհ և երկր. ֆակ. ԵՊՀ, մշակույթ., 2-րդ կուրս /բացառություն/	70000
44	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Սահրադյան Վարսիկ, ժուռ. ֆակ., ԵՊՀ մշակույթ մագիստր., 2-րդ կուրս /բացառություն/	70000
45	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Մարկոսյան Ալիսա, ԵԼՀ ԵՊՀ մշակույթ, 2-րդ կուրս /բացառություն/	70000
46	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Հակոբյան Սվետլանա, ԵԼՀ, 3-րդ կուրս /բացառություն/	80000
47	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Մխիթարյան Խաչատուր, Թյուրք., պատմ, մագիստր., 2-րդ կուրս	80000
48	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Հունասյան Սարգիս, թյուրքագիտ., 1-ին կուրս	80000
49	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Միրզոյան Լենա, սոց. աշխատանք, 2-րդ կուրս /բացառություն/	80000
50	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Գաբրիելյան Մխիթար, իրավագիտ., 2-րդ կուրս	100000
51	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Գրիգորյան Արթուր, արաբագիտ., 3-րդ կուրս	100000
52	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Աբրահամյան Նարեկ, արաբագիտ., 2-րդ կուրս	100000
53	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Հովհաննիսյան Գոռ, թյուրքագիտ., 1-ին կուրս	100000
54	3/1/2022	ՀԱԱՀ հիմնադրամի Միսիան մ/ճ	Սիմոնյան Արթուր, հողային, կադաստր., 1-ին կուրս	100000
55	3/1/2022	ՀԱԱՀ հիմնադրամի Միսիան մ/ճ	Ստեփանյան Ստեփան, ագրոէկոնոմիկա և սննդ. էկոնոմիկա, 5-րդ կուրս	100000
56	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Տոնոյան Արեգնազ, ֆինանսներ, 3-րդ կուրս /Ջավախք, բացառություն/	100000
57	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Մուրադյան Գևորգ, թյուրքագիտ. 1-ին կուրս	100000
58	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Եղիազարյան Հայկ, թյուրքագիտ., 1-ին կուրս /բացառություն/	120000
59	3/1/2022	ԵՊՀ հիմնադրամ	Օհանյան Նարեկ, թյուրքագիտ., 2-րդ կուրս /բացառություն/	120000

60	3/1/2022	ԵՊՅ հիմնադրամ	Չաքարյան Ամայա, բանասիր., 1-ին կուրս /բացառություն/	120000
61	3/1/2022	ԵՊՅ հիմնադրամ	Ավետիսյան Ալլա, ԻԿՄ, 1-ին կուրս /բացառություն/	150000
62	3/1/2022	ԵՊՅ հիմնադրամ	Ղարազյոզյան Լիլիթ, թուրքագիտ., 2-րդ կուրս /բացառություն/	150000
63	3/1/2022	ԵՊՅ հիմնադրամ	Եղիազարյան Սամվել, գործարար կառ., մագիստր., 2-րդ կուրս /բացառություն/	150000
64	3/3/2022	ԵՊՅ հիմնադրամ	Ափոյան Սյուզան, իրավագիտ., 2-րդ կուրս /բացառություն/	250000
65	11/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Եգայան Տիգրան, քիմիա, մագ. 2-րդ կուրս	30000
66	11/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Դր. Նազելի Չարչյանի անվ. կրթաթոշակ, Իսրայելյան Ռուբեն, ֆարմացիա, մագիստր.	30000
67	11/03/2022	ԵՊՅ Հիմնադրամ	Ստ. Ալաջաջյանի անվ. կրթաթոշակ, Բարսեղյան Վարդուհի, հայ բանասիր. 4-րդ կ.	30000
68	11/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Տեր-Կարապետյան Անդրանիկ, արևելագիտ. ֆակ. Թուրքագիտ. 3-րդ կուրս	80000
69	21/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Ռստակյան Լիանա, ԵԼՀ ֆակ., թարգմ. գործ. անգլերեն-հայերեն, 1-ին կուրս /Ջավախք, բացառություն/	100000 կանխիկ
70	13/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Սիրունյան Հայկ, հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս /բացառություն/	108000
71	21/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Չոլաքյան Հակոբ, իրավաբ. 1-ին կուրս, սիրիահայ /բացառություն/	250000
72	21/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Քելիյան Արմեն, ԻԿՄ ֆակ., 1-ին կուրս	85000
73	21/03/2022	Ռ. Մելիքյանի անվ. երաժշտ. քոլեջ	Լուսինե Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Ղազարյան Գոռ	10000
74	21/03/2022	Կոմիտասի անվ. պետ. կոնսերվատորիա	Լուսինե Չաքարյանի անվ. կրթաթոշակ, Սիմոնյան Սոֆյա	10000
75	22/03/2022	ԵՊՅ հիմնադրամ	Հարությունյան Նոնա, միջազգային հարաբ. քաղաքագիտություն, 2-րդ կուրս	100000
76	22/03/2022	Արցախի պետ համալսարան	Գասպարյան Մարիամ, հայոց լեզու և գրակ., 5-րդ կուրս, հեռակա	250000
77	22/03/2022	Արցախի պետհամալսարան	Ղազարյան Ինեսա, տարր. կրթ. մանկ. մեթոդիկա, 3-րդ կուրս	250000
Ընդամենը՝				6,891,000

ԳԼՆԱԿՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ — բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝
Յապրանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

ԱՎԱԳՅԱՆ Ա., ք. գ. դ., պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ Գ., ք. գ. թ., պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼ., պ. գ. թ., պրոֆեսոր
Շարվածքը և ձևավորումը՝ Ս. Մուրադյանի:
Յապրանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

Հասցեն՝ Երևան 0025, Աբովյան 52 Ա, հայ
բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215
սեն.: Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36, 55 – 25 – 37, 52-
29-36